

# ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԳՐԱԿԱՆ ԱՆՏԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն մի ազգ ունեցել է իւր գրական անարխիան:

Գրական անարխիա նշանակում է մի գրութիւն, երբ՝ ողի բարձր խաւերում սաւառնող արծուի մէջքին կպած ճանճը իրեն արծիւ է երևակայում, երբ գորտն ուզում է հաւասարուել ցուլին, երբ քոթոթն անպատիժ հաջում է փղի վրայ...

Ասում են, որ գոյութիւն ունի միջամտորակային կամ միջամթնորոտային մի ամուլ տարածութիւն, որ մարմինները կորցնում են իրենց կշիւը, ծանրութիւնը: Երևի մի այդպիսի ամուլ տարածութիւն կայ նաև տգիտութեան ու քաղաքակրթութեան, խաւարի և լոյսի մէջտեղ, ուր մարդիկ կորցնում են իրենց մտաւոր ու բարոյական կշիւը: Մարդիկ պահպանելով իրենց ուղղահայեաց դիրքը, կորցնում են մտաւոր հաւասարակշռութիւնը: Այս վիճակի մէջ մարդն իրեն երևակայում է ամենայն ինչ: Եւ՝ իրաւ՝ նա ամենայն ինչ է, բացի մարդ լինելուց: Այս վիճակի մարդիկ միմեանց նայում են մանրացոյցի միջոցով: Խոշորութիւնը, բարձրութիւնը, վեհութիւնը կորցնելով, մարդկանց աչքին երևում են շատ փոքր, ստոր ու չնչին: Իսկ շրջապատը մանրանալով բնականաբար խոշորանում է *ԵՍՂ*:

Այս բոլորը տեղի է ունենում մտաւոր ու բարոյական ամբարտաւանութեան շնորհիւ. իսկ ամբարտաւանացած եսը արտադրում է գրականութիւն: Սա դեռ չարիքի փոքրագոյնն է, մեծագոյնն այն է, որ մանրացոյցով զինուած ամբարտաւան եսը յաճախ հանդէս է գալիս որպէս գրական ուղեցոյց. խօսում է գեղարուեստից, հոգեբանութիւնից, դատում է ու դատապարտում, գերեզման է փորում ու խաչեր տնկում...

Կոյրը գրական մենտորութիւն է անում ճիշտ այնպէս, ինչպէս Կաբլովի ողորմածիկ էլը սոխակին խորհուրդներ էր տալիս:

Մենք այժմ գտնուում ենք մի այդպիսի դրութեան մէջ, կոպիտ, ամբարտաւան *ԵՍԻ* բռնակալութեան ներքոյ: Մեր գրականութեան մէջ թագաւորում է բացարձակ անիշխանութիւն: Մեծ ու փոքր չկայ: Գլխարկ կրելու անարժան գլուխներ դափ-



նիներ են երևակայում: Տեղը, դիրքը, արժանիքը ճանաչող չկայ: Մէկը միւսի աչքին այնքան փոքր է ու չնչին, որքան իւրաքանչիւրը մեծ է ու խոշոր իւր աչքին:

Ան սա անարխիական ժամանակի արդիւնքն է, նրա հարպատ պտուղը:

Որպէս զի մեզանում մէկը գրող ու քննադատող դառնայ, բաւական է, որ գիտնայ հայերէն լեզուն և անզիր իմանայ այդ լեզուի այբուբենը: Մի քանի բառ յօդել, մի քանի խօսք շարայարել գիտցողն արդէն ամենայն ինչ է: Իսկ եթէ այդպիսին ուրիշների խօսքերն ու մտքերը գողանալու և որպէս իւր սեփականութիւն վաճառելու չափ էլ յանդուգն է—նա էլ ոչնչով յետ չի մնալ արծուի մէջքին թառած ճանճից:

Այս կարգի ինքնակոչ մեծամիտներից և ի պաշտօնէ ամբարտաւաններից, ինչպէս ժանտախտից, պէտք էր զգուշանալ. սակայն ոչ միայն չենք զգուշանում, ոչ միայն այդ գրական շարիքի դէմ չենք կուռում, այլև պահում, կերակրում ենք մեր ծոցում: Ինչո՞ւ. Որպէս զի այդ ամբարտաւաններն իրենց ամբարտաւանութիւն մէջ աւելի կատարելագործուեն, ըստ հարկին զէնքի տեղ ծառայելու համար. որպէս զի աւելի մեծ յանդգնութեամբ ցեխտտեն, մրտտեն, ոչնչութեան հաւասարեցնեն նոյն իսկ նրանց, որոնց կօշիկների խրացները քանդելու արժանի չեն իրենք:

Մենք դեռ դատապարտում ենք հայ ինտելիգենցիային, որ նա ազգային կեանքով, գրականութեամբ ու մամուլով չի հետաքրքրուում:

Հօ այսպիսի գանգատներ շատ ենք լսել, շատ ենք կարդացել, առանց հարց տալու թէ իրաւունք ունինք:

Եթէ ամեն մի անհատի արժանապատուութեան զգացումը հաւասարում է նրա կրթութեան (խօսքս նրանց մասին չէ, որոնք գիտութեամբ չեն յագեցած, այլ դիմակաւորուած նրանով), այն ժամանակ պէտք է ընդունենք, որ ինտելիգենտ մարդը միշտ ամբողջ ուսերբով բարձր պէտք է կանգնած լինի գրող մրտտող այն ամբարտաւան թերուաններից, որոնք զուրկ լինելով և՛ արժանիքից և՛ արժանապատուութիւնից, չեն կարող ուրիշների ունեցածը յարգել:

Ուրեմն ի՞նչ իրաւունք ունինք պահանջելու, որ իւր պատիւը, յարգն ու դիրքը ճանաչող ինտելիգենտ մարդը զայ, ընկերանայ մեծամիտ թերուաններին, այդ ամենքին մանրացոյցով նայող խենթերին, կարդայ նրանց փեղցփեղութիւնները: Ինչո՞ւ, հարցնում եմ. արդեօք նրա համար, որ մի օր էլ ինքը ցեխտտուի հենց այդ թերուանների ձեռքով...

Չէ՞ որ անարխիական ժամանակի տենդով բռնուած զաւանցողներից ամեն ինչ սպասելի է, ЧѢМЪ ЧОРѢ НО ШУТИТЬ? Իսկ ապա՞ս լոկ ենթադրութիւն չէ, այլ փաստ. այդ փաստը փաստ է եղել միշտ և է այսօր: Կարո՞ղ էք ցոյց տալ մե-



ուած կամ ողջ հայ գրական կամ հասարակական գործիչներէ՞  
գէթ մէկը, որ զերծ մնացած լինի մեր գրական քրթոթներէ  
անպատիժ յարձակումներէց:

Այս չարիքը հին է և անսպառ. նա օրէցօր աւելի է ա-  
ճում, պարարտ հողում ընկած չար սերմի նման: Մենք ի հար-  
կէ տեսնում ենք այդ չարիքի հասցրած պտուղները և դանգաա-  
ւում. բայց մեր գանգատը չենք ուղղում այնտեղ, ուր թագնուած  
է նրա արմատները, այլ այնտեղ, ուր նա գոյութիւն չունի:

Քիչ վերն սասցի, որտեղից վեր ելնողը գրող-մրտող է,  
որ մեր պատանիներից մեծ մասը այրուբենի հոտը առած չա-  
ռած նետում է գրական ասպարէզ: Այս երևոյթը մենք գլխա-  
ւոր չարիքը համարելով, գանգատում ենք:

Սակայն ո՞վ է մեղաւոր:

Մենք գիտենք, որ գրողները, լինեն բանաստեղծ, վիպա-  
սան, թատերագիր, մատենախօս և նոյն իսկ պարզ թղթակից,  
իրենց գրական գործունէութիւնն սկսում են և վերջնացնում մա-  
մուլով, նրա մէջ և նրա անմիջական աջակցութեամբ:

Ուրեմն գրուածքները առանձին գրքերով լոյս տեսնելուց  
առաջ, մեծ մասամբ նախ լոյս են տեսնում այս կամ այն թեր-  
թի կամ ամսագրի մէջ, այսինքն անցնում են այս կամ այն  
խմբագրութեան քննադատական բովից: Ես ամենեւին չեմ կաս-  
կածում, որ խմբագրատներում նստած են համեմատաբար խել-  
քը վրսին, ձեռնհաս մարդիկ, որ այդ մարդկանց վրայ կայ մի  
բարոյական պարտականութիւն և այդ պարտականութեան թե-  
ւադրութեամբ, նիւթերը՝ ինչ կարգի էլ պատկանելիս լինեն  
նրանք, տպագրելուց առաջ կարդում, քննում ու քննադատում  
են, քաջ գիտնալով, որ թերթում լոյս տեսած ամեն տողի ու  
տառի համար պատասխանատու են ոչ միայն ընթերցող հա-  
սարակութեան, այլ և հեղինակի առաջ:

Այս պատասխանատուութեան բարոյական ծանրութիւնը  
զգում է ամեն մի խմբագրութիւն, այդ պատճառով էլ նա չի  
տպագրում այն, որին ինքը չի հաւանում, իսկ հաւանած ու  
տպագրածը պաշտպանում է ամենայն եռանդով, որովհետեւ  
դրանով պաշտպանած է լինում իւր թերթի և իրեն՝ խմբագրու-  
թեան պատիւը:

Ի հարկէ ընթերցողը հնից ու նորից բազմաթիւ օրինակ-  
ներ կարող է յիշել, երբ մի թերթի մէջ անդունձ բերանով  
հայհոյուել ու ցեխտուել է այն հեղինակն ու իւր աշխատու-  
թիւնը, որը մի քանի ամիս կամ տարի առաջ փառաբանուե-  
լ է հենց նոյն թերթի էջերում: Այդ ի հարկէ ես չեմ կարող հեր-  
քել: Թօսքս սկզբունքի մասին է: Իսկ եթէ պատահում է ընդ-  
հակառակը—դա ավացուցանում է, որ այդպիսի խմբագրու-  
թիւնը բաղկացած է առանց համոզմունքի ու սկզբունքի, ա-  
ռանց պատուի ու արժանապատուութեան անձերից, որոնք չգի-  
տեն թէ մի ժամանակ իրենց թերթում հրատարակածի վրայ  
թքելով, թքում են իրենց և իրենց թերթի վրայ:



Կարծեմ կարողացայ ասպացուցանել, որ եթէ նոյն իսկ չարիք համարուի այն, որ մարդիկ յանպատրաստիցս նետուում են գրական ասպարէզ ու գրում-մրոտում են,—այդ չարիքը պաշտպանողն ու նրան աջակցողը մամուլն է:

Սյժմ հարց է—մեզանով է ծնունդ առել այդ գրական հիւանդութիւնը, մենք բացառութիւն ենք կազմում:

Ամենայն վստահութեամբ կարելի է ասել, որ սյ, Հայր բացառութիւն չի կազմում, բոլոր ազգերի պատանիք, որոշ հասակում և որոշ պայմանների մէջ վարակուում են գրական ասպարէզը մտնելու հիւանդութեամբ: Սա ինքնըստիներեան մի ուրախալի երևոյթ է, եթէ ի նկատի առնենք, որ ոչ մի գրող մօրից կազմ ու պատրաստ չի ծնում, որ գրական տենչով բռնած պատանիների միջից են առաջ եկել և առաջ գալիս գրական խոշոր անձնաւորութիւնները: Թուեցէք մեր արդէն մեռած և ողջ բոլոր գրական գործիչներին և կը տեսնէք որ բոլորն էլ իրենց գրական գործունէութիւնն սկսել են պատանեկան հասակից: Ի՞նչ կը լինէր, եթէ նրանք խեղդէին իրենց մէջ այդ ձգտումը լոկ այն կասկածով, թէ գուցէ իրենք գրականութեան համար կոչուած չեն:

Սրանից մի քանի ամիս առաջ մեր մամուլը խօսում էր Նեկրասովի մասին: Ո՞վ էր նա, եթէ ոչ մէկը գրական հիւանդութեամբ վարակուած պատանիներից: Ու ինչ ծաղր, նախատինք, մինչև անգամ հայրոյեանք ասես չեն թափել նրա գլխին, ինչ մեծ-մեծ խաչեր ասես չեն տնկել նրա գրական տաղանդի ու ընդունակութեան վրայ: Սակայն ասպզան ցոյց տուեց, որ նա կռիցեալներից մէկն է և ոռւս գրականութեան մէջ գրաւեց արժանաւորագոյն տեղերից մէկը:

Բայց կարելի է հաւաստեալ ասել, որ իւր ժամանակին շնորհալի Նեկրասովի հետ գրական ասպարէզն են մտել նաև շատ անշնորհք Նեկրասովներ, և եթէ դոքա անյայտացել են առանց հետք թողնելու—այդ տեղի է ունեցել շնորհիւ անողոք և մի և նոյն ժամանակ լուրջ ու անկաշառ կրիտիկայի:

Կրիտիկա—անա թէ ինչ է պակասել և ինչ է պակասում մեզ:

Կրիտիկան գրականութեան ջերմաչափն է: Ու փոխանակ գանգատելու այն բանի դէմ, որ գրող-մրոտողները մեզանում բուսնում են սունկի նման,—պէտք է գանգատենք, որ լուրջ, ձեռնհաս քննադատներ չունինք:

—Քննադատներ չունինք, հարցնում ես, ընթերցող և տրամադիր ես թուելու մի շարք անուններ—Կիրակոսին ու Մարկոսին, երէցին ու մէրեցին, որոնք վերջին ժամանակներս, մատենախօսութեան դիմակի տակ գրում են ու մրոտում...

Ո՞չ, ընթերցող, իմ ասածն այդ չէ, քննադատութիւն ասելով ես ուրիշ բան եմ հասկանում: Միթէ այդ և նման համբակներին կարելի է քննադատներ կոչել կամ բառախաղը քրննադատութիւն: Մի՞թէ մի աշխատութեան բովանդակութիւն



պատմելը մատենախօսութիւն է կամ նորա հեղինակին հայտոյելը՝ խեղճ, գիտութիւն է պահանջում:

Կրանք (խօսքս բացառութիւնների մասին չէ) քննադատներ չեն, այլ գրական ստահակներ, քինադատներ, արձագանք տուող դատարկ կարասներ: Մատենախօսութիւն վերնազրի տակ կարգալով անմիա բացականչութիւններ, յանդուզն դատավճիռներ, գողացած նաչխուն ֆրազներ ու հայտոյեանքներ, միթէ դրանց հեղինակների տեղ դուք չէք կարմրում:

Այս կարգի քննադատներ, այ՛ն, մենք ունեցել ենք և ունինք: Սրանք այն աներևս ճանճերից են, որ տղալով դալիս ու ընկնում են բաժակիդ մէջ: Ճիշտ է ձեզ զգուեցնում են, բայց իրենք էլ սատկում են: Սրանք ինքնակոչ քննադատներ են, կրիտիկայի անողք աւելով սրբուելու ու աղբանոց նետուելու արժանի քննադատներ:

Տպագրական խօսքը իրենց ոչնչութիւնը տարբեր դիմակների տակ թագգրածների ձեռքում մանրացոյցի դեր է կատարում. նրանք մանրացնում, ոչնչացնում են ամենքին, որպէս զի խոչորանայ իրենց ամբարտաւան *նսր*:

Այս կարգի անձնաւորութիւններից մի քանիսին ճանաչում եմ. սրանք տարբեր անունների ու կեղծանունների տակ թագնուած ըստ հարկին գրում են և՛ «Մշակ»-ում և՛ «Նոր-Կար»-ում և՛ «Մուրճ»-ում և՛ «Տարագ»-ում. այո, չորսին էլ խաբելով, մոտրեցնելով, այս չորսին էլ ծառայեցնելով իրենց անձնական կրքերին ու շահերին: Այս դիմակաւոր հրէշները, (որոնց դէմքը երբեք է ցոյց կը տամ) գրում են նաև քննադատութիւններ, մատենախօսութիւններ: Սրանք մի անուրանալի և անկապտելի արժանիք միայն ունին—այդ իրենց նուրբ հոտառութիւնն է, որով կարողանում են ըմբռնել թէ որ թերթի ում մասին ինչպէս է տրամադրուած: Եւ պարծենում էլ են, որ կարողանում են իւրաքանչիւր մի թերթի աշխատակցին հենց նոյն թերթի միջոցով *մրոտել*...

Վերջապէս սոքա մեր անարխիական գրականութեան բարկիլլֆէզրօներն են:

Իայց կարող են դոքա քննադատներ, մատենախօսներ համարուել:

Ո՛չ: Եւ կրկնում եմ, որ իմ խօսքն այսպիսի քննադատների մասին չէ:

Քննադատը մի գրական դատաւոր է, որ պէտք է առաջնորդուի գիտութեան ու ճշմարտութեան օրէնքներով. կանխակալ կարծիք, կիրք, շահ և այլ յանցաւոր միտումներ չպէտք է ունենայ նա. քննադատը կամքի ոյժ, քաջութիւն պէտք է ունենայ իւր *նսր* ճշմարտութեան զոհելու: Քննադատից պահանջուում է նաև բարձրագոյն կրթութիւն, գիտնական մեծ և բազմակողմանի պաշար, բացառիկ ընդունակութիւն՝ թափանցելու իրերի և երևոյթների խորքը, խուզարկելու և վերլուծելու նոցա.



պէտք է ունենայ լայն աշխարհայեացք, պատրաստականութիւն և այլ շատ բան:

Իսկ սովբեր են և ինչ են ներկայացնում վերոյիշեալ ինքնակոչ ու տղայական քննադատները, բացի փողոցային հայհոյեանքից ու մեծամիտ բացականչութիւններից, ինչ գիտնական ցենդ կամ առանձնայատկութիւն ունին...

Աւ սէր կը տանի մեզ այս անարխիական դրութիւնը, սէր կը վերջանայ նա: Թացն ու չորը դեռ երկմր պիտի այրուեն միասին: Միթէ ժամանակ չէ, որ մամուլը հրաժարուի այդ դիմակաւոր իմաստակների մատուցած ծառայութիւնից, մամուլի սուրբ էջերը մաքրի այդ աղտոտ անուններից:

Յիշե՛ք ռուս քննադատ Բելինսկուն, որ ռուսական գրականութեան անտէրութեան տարիներում մի քանի բառերով բնորոշե՛ք նոյն ժամանակի ոգին ու պահանջը:

«Духъ анализа и изслѣдованія— духъ нашего времени. Теперь все подлежит критикѣ, даже самая критика».

Աւ լաւ ըմբռնած լինելով ժամանակի ոգին, նա քննադատեց ամեն ինչ և ամենքին, չխնայելով նոյն իսկ քննադատներին: Ընթերցող հասարակութիւնը, որ զարմանալի բնագոյով գիտէ սովորական բառերի ու տառերի տակ թագնուած կեղծն ու անկեղծը հասկանալ, գիտէ նոյնպէս գնահատել անկեղծ խօսքը:

Այո՛, քննադատը պէտք է լինի մարմնացեալ անկեղծութիւն:

Բագու

Գ. Լուսինեանց